

Հաստատված է

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի

գիտական խորհրդի 2016թ. նոյեմբերի 26-ի թիվ 19 նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն փաստաթղթով սահմանվում են ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը, նպատակները, խնդիրները և իրականացման սկզբունքները:

1.2. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ոլորտում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը համահունչ է ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրին և մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրներին:

1.3. Քաղաքականության հիմքում ընկած է մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ակադեմիական ազատության սկզբունքը՝ հիմնված կրթական ծրագրի և դասընթացների ուսումնառության ելքային արդյունքների ձևավորումը ապահովող համապատասխան մոտեցումների ու մեթոդների կիրառման վրա:

1.4. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ճիշտ ընտրությունն ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր ուղիներից է, հետևաբար

մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաներով օժտված անձ ձևավորելու նպատակին անհրաժեշտ է ծառայեցնել ուսուցման բազմազան ձևեր, մեթոդներ և միջոցներ:

1.5. Սույն քաղաքականության դրույթները համահավաք կերպով արտացոլվելով դասընթացների փաթեթներում (պորտֆոլիոներում)՝ իրականացնում են մասնաճյուղում դասավանդող դասախոսները, իսկ գործընթացի անմիջական վերահսկողությունը կատարվում է մասնագիտական ամբիոնի վարիչի և մասնագիտության կրթական ծրագրերի ղեկավարների կողմից:

2. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության նպատակները

2.1. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության նպատակներն են.

- 1) ապահովել մասնագիտության կրթական ծրագրերով սահմանված անհրաժեշտ կոմպետենցիաների (գիտելիքներ, հմտություններ, կարողություններ) և որակավորումների ձևավորումը,
- 2) ակտիվացնել տեղեկատվական-հաղորդակցության, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և ուսուցման միջոցների արդիականացման աշխատանքները,
- 3) կրթական ծրագրի և առանձին դասընթացների համար սահմանել և կանոնակարգել պահանջվող վերջնարդյունքները ձևավորող ուսուցման, ուսումնառության մեթոդները, դրանց ընտրողականության նկատմամբ կրթօջախում ցուցաբերել միասնական մոտեցում,
- 4) ձևավորել ուսանողակենտրոն միջավայր՝ նպաստելով միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի շարունակական կրթության հնարավորությունն ապահովող անձնային և ինտելեկտուալ որակների, տեղեկատվական իրազեկվածության պատշաճ մակարդակի ձևավորմանը,

- 5) դասավանդողների ընդհանուր պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպել վերապատրաստումներ՝ կատարելագործելու նրանց ակադեմիական և մանկավարժական կոմպետենտությունը, նպաստելու մեթոդական վարպետության աճին, ապահովելու մասնագիտական շարունակական զարգացումը:

3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության խնդիրները

3.1. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության խնդիրներն են.

- 1) ուսուցումը պլանավորել և իրականացնել մասնագիտության կրթական չափորոշիչներին ու ծրագրերի ելքային արդյունքներին համապատասխան՝ ապահովելով ուսումնառողների գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող Որակավորումների ազգային շրջանակի պահանջները,
- 2) իրականացնել ուսուցման և ուսումնառության մեթոդների, միջոցների արդյունավետ ընտրություն, կիրառել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի և մեթոդների ընտրության հարցում հաշվի առնել ուսումնառողների մտավոր առանձնահատկությունները,
- 3) ուսումնառության ընթացքում առանձնապես կարևորել ուսուցման գործնականությունը, առավել ակտիվացնել ուսումնառողների մասնակցությունը ուսուցման գործընթացին և ուսանող-դասախոս համագործակցությունը, ստեղծել հաղորդակցման անկաշկանդ և գործնական միջավայր,
- 4) ուսումնառողների մեջ ձևավորել ուսումնական կայուն դրդապատճառ (մոտիվացիա), զարգացնել նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություններ, հաշվի առնել յուրաքանչյուրի անհատական կարողությունները՝ առանձնակի կարևորելով ինքնակրթության գործոնը:

4. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության սկզբունքները

4.1. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, ինչպես և ուսուցման ամբողջ համակարգի արդյունավետ գործունեության ապահովման համար կրթօջախում անհրաժեշտ է հետևել մի շարք հիմնական սկզբունքների, որոնցից յուրաքանչյուրն առանձին և համատեղ կարևոր են ու անհրաժեշտ.

- 1) **ընտրողականություն.** դասավանդողն ազատ է ուսուցման և ուսումնառության մեթոդների ընտրության մեջ, որտեղ առաջնային են համարվում ընտրության համապատասխանությունը ուսուցման նպատակներին, խնդիրներին, կրթական վերջնարդյունքներին, ուսումնառողների կարողություններին, ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպման պայմաններին, ուսումնառողների քանակական կազմին և այլն,
- 2) **բազմազանություն և ինստիտուցիոնալացում.** ենթադրում է մշակված, գործնականում ստուգված և իրենց կենսունակությունն ու արդյունավետությունն ապացուցած նոր, առաջադիմական կրթական փորձի ներդրում, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների, միջոցների մշակման, փորձարկման և ներդրման ստեղծագործական նախաձեռնության ապահովում, արդյունքների արդյունավետության մշտադիտարկում,
- 3) **պատասխանատվություն.** կրթության կայուն մոտիվացիա ստեղծելու համար ենթադրում է դասավանդողների ու ուսումնառողների պարտավորվածություն՝ գործի դնելու բոլոր հնարավոր մեխանիզմները, մշտապես զարգացնելու իրենց գիտական և մանկավարժական փորձը, ապահովելու անհրաժեշտ կոմպետենցիաների և որակավորումների ձևավորումը,
- 4) **ինքնադրսևորում.** կարևորելով ուսումնառողի ակտիվությունը ճանաչողական պահանջի բավարարման և գիտելիքի ձեռքբերման գործընթացում՝ ենթադրում է ուսումնառողի անմիջական, ակտիվ մասնակցություն, հնարավորություն է տալիս ապավինել ինքնուրույն ստեղծագործական և քննադատական մտածողությանը,

ձեռք բերել համագործակցային, հաղորդակցման կարողություններ, ի մի բերել, զարգացնել և կիրառել ուսուցանվածը,

- 5) **համընդգրկունություն և համագործակցություն.** համախմբելով կրթական ռեսուրսներն ու ձևավորելով վստահության մթնոլորտ՝ հնարավորություն է ընձեռնում ցուցաբերել փոխօգնության և փորձի փոխանակման պատրաստակամություն, փոխադարձ պատասխանատվության մեխանիզմներ ձևավորել ուսումնառողների և դասավանդողների միջև, օգնել, որ ուսումնառության գործընթացն իրականացվի սահմանված պահանջներին համապատասխան,
- 6) **համակարգվածություն.** ենթադրում է կրթության ոլորտում նրա բոլոր օղակների արդյունավետ և նպատակային փոխգործակցությունը, որի արդյունքում կրթօջախի դասախոսական և ուսումնառող կազմերը կհնտեգրվեն միասնական կրթական համակարգին: